



20 մլն. ամս դուլարի դրամաշնորհային ծրագիրն էապես կօժանդակի էներգաարդյունավետության բարձրացման քաղաքականությանը

ՀՀ բնապահպանության նախարարությունում տեղի է ունեցել «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցման» Կլիմայի կանաչ հիմնադրամի ծրագրի փաստաթղթի համաձայնեցման տեղական կոմիտեի նիստը: Միջոցառմանը մասնակցում էին կոմիտեի անդամ գերատեսչությունների ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև միջազգային այլ ծրագրերի և եվրոպական ներդրումային բանկի ներկայացուցիչներ: Բացելով կոմիտեի նիստը՝ ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը շեշտել է, որ քննարկվող ծրագիրը Կլիմայի կանաչ հիմնադրամի կողմից հաստատված դրամաշնորհային 10-րդ ծրագիրն է, իսկ տարածաշրջանում՝ առաջինը: Ըստ նախարարի՝ այս փաստը պարտավորեցնում է Հայաստանին, ծրագրի առումով լինելով

առաջատարը, լավագույն արդյունքներ ապահովել, որպեսզի հետագայում այն դառնա շարունակական և օժանդակի երկրի վարած էներգաարդյունավետության բարձրացման քաղաքականությանը: «Ծրագրի հիմնական նպատակն է կլիմայի փոփոխությանը պայմանավորված հարմարվողականության ուղղությամբ, իսկ առանձին դեպքերում՝ կլիմայական բացասական դրսևորումների դեմ ուղղված գործողությունների իրականացումը: Դրա իրականացման արդյունքում նաև ունենալով էներգաարդյունավետության էական աճ՝ կնպաստենք ազգաբնակչությանը, տնտեսվարող սուբյեկտներին և պետական մարմիններին էականորեն խնայել ռեսուրսներ և դրանք ուղել զարգացման այլ ուղղություններ», - նշել է Ա. Մինասյանը:

շարունակությունը էջ 2 /

• 20 մլն. ԱՄՆ դոլարի դրամաւճնորհային ծրագիրն էադես կօժանդակի էնեգաարդյունավետության բարձրացման ֆադաֆականությանը

Սկիզբը էջ 1 /

Նախարարը կրկին շեշտել է ծրագրի կարևորությունը ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման առումով: ՄԱԿ-ի գարգացման ծրագրի /UNDP/ հայաստանյան գրասենյակի մշտական ներկայացուցչի տեղակալ Դմիտրի Սարիյասինը, շնորհակալություն հայտնելով ԶԳ բնապահպանության նախարարությանը նման կարևոր և բարդ ծրագիր նախաձեռնելու համար, ներկայացրել է այն արդյունքները, որոնք նախատեսվում է ստանալ ծրագրի իրականացման ավարտին: Բանախոսը կարևորել է նաև էներգախնայողության մեխանիզմների օրենսդրական կարգավորումները, որոնք նույնպես նախատեսված են ծրագրի շրջանակներում: Երևանի փոխքաղաքապետի առաջին տեղակալ Կամո Արեյանն իր խոսքում նշել է, որ հիմնական շահառուներն Երևանի քաղաքապետարանն է և իրենք առանձնապես են կարևորում բնակֆոնդի պահպանմանն ուղղված ծրագրերը: Վերջինս նշել է, որ ԶԳ բնապահպանության նախարարության և ՄԱԿ-ի գարգացման ծրագրի հետ արդեն կա համագործակցության հարուստ և արդյունավետ փորձ՝ հիշատակելով Ավան վարչական շրջանում իրականացրած պիլոտային ծրագիրը, որի արդյունքում շենքի ջերմամեկուսացման շնորհիվ գրանցվել է 50-ից 60 տոկոս էներգախնայողություն և դրան համապատասխան ջերմոցային գազերի արտանետման կրճատում, իսկ կանաչ լուսավորության ծրագրով, արձանագրվել է 60-70 տոկոս ծախսերի խնայողություն: «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցման» ծրագրի ղեկավար Վահրամ Ջալալյանն էլ տեղեկացրել է, որ ծրագրի մշակման մեկնարկը տրվել է 2015 թ.-ին և Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից հաստատվել 2016-

թ. հունիսին: Ծրագրային փաստաթուղթը մշակվել է ԶԳ բնապահպանության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, այլ շահագրգիռ մարմինների, ՄԱԶԾ հաստատանյան գրասենյակի արդյունավետ համագործակցությամբ և նախատեսվում է ներգրավել 20 մլն ԱՄՆ դոլարի դրամաշնորհային միջոցներ: Քանի որ ջերմոցային գազերի արտանետումների 24 տոկոսն առաջանում է շենքերում սպառվող էներգիայից և ԶԳ բնակչության 30 տոկոսը համարվում է «էներգետիկ աղքատ»/ Եկամտի 10 տոկոսից ավելին հատկացնում են էներգիայի սպառման ծախսերին/ նախատեսվում է ջերմամեկուսացման աշխատանքներ իրականացնել մայրաքաղաքի և մարզերի 290 բազմաբնակարան, 150՝ փոքր և 23 մեծ հանրային շենքերի և 6000 առանձնատների համար, ինչի արդյունքում՝ կապահովվի 50 տոկոս էներգախնայողություն և արտանետումների կրճատում: ԶԳ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Է. Գրիգորյանը ծրագիրն իրականացնող խմբին ներկայացրել է մի շարք առաջարկներ, մասնավորապես՝ կարևորել ծրագրում տեղական փորձագետների ընդգրկումը, մայրաքաղաքում նախատեսված առանձնատների թվաքանակի նվազեցում, ինչպես նաև՝ ոլորտը կարգավորող օրենսդրությանը և նրա փոփոխություններին համապատասխան իրականացումը: Քննարկման արդյունքում հնչել են մի շարք առաջարկություններ, որոնք հաշվի կառնվեն փաստաթուղթը վերջնական տեսքի բերելու ժամանակ: Ամփոփելով աշխատանքային քննարկման արդյունքները՝ Արծվիկ Մինասյանը հայտնել է, որ ԶԳ բնապահպանության նախարարությունը վճռական է տրամադրված ծրագիրը ղեկավարելու և բարձր արդյունքներ ապահովելու հարցում:

Նախարարությունն այսուհետև կաշխատի 7 հիմնական գործառույթով եւ բարեփոխված արդյունավետ մեխանիզմներով

ԶԳ բնապահպանության նախարարությունում տեղի է ունեցել նախարարին կից հասարակական խորհրդի հերթական նիստը: Խորհրդի անդամների առաջարկով օրակարգային առաջին հարցի շրջանակներում Ա. Մինասյանը ներկայացրել է ԶԳ բնապահպանության նախարարությունում իրականացվող բարեփոխումների թիրախները: Նա ասել է, որ գերատեսչությունը ղեկավարելու կարճ ժամանակահատվածում ոլորտի խնդիրների փոփոխումները, ինչպես նաև՝ հասարակական կազմակերպությունների և մասնագետների հետ քննարկումները հանգեցրել են նախարարության գործառույթների վերանայման անհրաժեշտությանը և համապատասխան առաջարկները ներկայացվել են ԶԳ նախագահին ու վարչա-

պետին: Նախարարը տեղեկացրել է, որ միասնական բնապահպանական քաղաքականությունն իրականացվելու է յոթ հիմնական գործառույթներով: «Առաջին՝ բնական ռեսուրսների /սպառվող և չսպառվող/ հաշվառման համակարգի ձևավորումը մեկ միասնական հարթակում և դրա համատեքստում՝ ամբողջական առաջնային տեղեկատվության բազայի ստեղծում: Երկրորդ՝ բնական ռեսուրսների առաջարկի կառավարում /պլանավորում/, որպեսզի ցանկացած նախագիծ իրականացնողի համար որակական և քանակական սահմանափակումը տեսանելի լինի:

շարունակությունը էջ 3 /

• Նախարարությունն այսուհետև կաշխատի 7 հիմնական գործառույթով և բարեփոխված արդյունավետ մեխանիզմներով

Սկիզբը էջ 2 /

Երրորդ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության նոր՝ միջազգային համակարգին համապատասխանող գործառույթի ձևավորում՝ առանձին դեպքերի համար օրենքով ամրագրելով պարտադիր միջազգային փորձաքննության անհրաժեշտությունը, որպեսզի հասարակության մոտ թերահավատություն չառաջանա գործող համակարգով ձեռնարկողի հայեցողությամբ իրականացվող միջազգային փորձաքննության արդյունքների վերաբերյալ: Մեծ բնապահպանական ռիսկեր պարունակող նախագծերի համար սահմանվելու են պարտադիր միջազգային փորձաքննություններ, որոնք արվելու են ձեռնարկողի ֆինանսական միջոցների հաշվին, բայց լիազոր մարմնի կողմից: Մյուս կարևոր գործառույթը՝ միասնական մոնիտորինգի համակարգի ձևավորումն է: Գործող մոնիտորինգային համակարգը տարանջատված է տարբեր կառույցներում և շատ դեպքերում մակերեսային բնույթ է կրում», - նշել է նախարարը և հավելել, որ շրջակա միջավայրի պահպանության և վերականգնման գործառույթի շրջանակներում դիտարկվելու են ոչ միայն կառավարման պլանները, այլև շրջակա միջավայրի վերականգնողական և տարբեր բնական ռեսուրսների անհամաչափությունները վերացնելու և այն բնականոն զարգացման հարթություն տեղափոխելու միջոցառումները: ՀՀ բնապահպանության նախարարը կարևորել է էկոլոգիայի և դաստիարակության գործառույթը, որը վերաբերում է հասարակության տարիքային բոլոր խմբերին՝ մանկահասակ տարիքից մինչև ավագ սերունդ, անկախ գործունեության ոլորտից և այս ուղղությամբ ներդրվելու են բոլոր հնարավոր միջոցները: «Բնօգտագործման և բնապահպանական վճարների քաղաքականությունը դիտարկվելու է վերոհիշյալ բոլոր հիմնական գործառույթներում: Այդ վճարները պետք է համահունչ լինեն նախատեսվող սահմանափակումներին, եթե որակական տեսանկյունից սահմանված է, որ ծավալվելիք գործունեությունը չպետք է վնաս հասցնի շրջակա միջավայրին, կամ այն պետք է լինի նվազագույն, ապա բնապահպանական վճարների դրույքաչա-



փերը և քաղաքականությունը պետք է համահունչ լինի այս սահմանափակումներին և նպաստի դրա իրականացմանը», - նշել է Ա. Մինասյանը: Տեղեկացվել է նաև, որ նախատեսվող գործառույթների կենտրոնացումը և ամբողջականացումը նախարարությունում, ենթադրում է նրա անվանափոխություն: Ըստ Ա. Մինասյանի՝ նախատեսվում է գերատեսչությունը վերանվանել «Շրջակա միջավայրի նախարարության»: Բարեփոխումների շրջանակներում կծնվորվեն նաև նախարարության գործառույթների իրականացման այնպիսի մեխանիզմներ, որոնք արդյունավետ կգործի՝ անկախ նրանից, թե տվյալ ժամանակահատվածում ովքեր կլինեն այն իրականացնողները: Հասարակական խորհրդի նախագահն անդրադարձել է նաև իրականացվելիք կադրային և կառուցվածքային արմատական վերանայումներին՝ նշելով, որ գերատեսչությունում աշխատելու հնարավորություն կունենան այն մասնագետները, որոնք կբավարարեն երեք չափանիշի՝ հայրենասիրություն, պատասխանատվություն և պրոֆեսիոնալիզմ: «Այն անձը, ով հայրենասեր չէ և մտածում է օր առաջ լքել Հայաստանը, ապա նա պետական գերատեսչությունում անելիք չունի», - հատուկ շեշտել է Արծվիկ Մինասյանը:



Ինչ առաջարկներ ունեն հանրային խորհրդի անդամները

«Դեմետրա-Էկո» ՅԿ փոխնախագահ Վ. Չակոբյանը «Ներկայացրել է ՅԿ կարմիր գրքում գրանցված բույսերի նոր բնակատեղիները՝ հատուկ պահպանման ռեժիմի ներքո ընդգրկելու առաջարկը: Բանախոսը մատուցել է հասարակական կազմակերպության երկու տարվա ուսումնասիրությունների արդյունքները, ըստ որի կարմիրգրքային բույսերի հայտնաբերված նոր բնակատեղիները պաշտպանված չեն և ենթարկվում են անտրոպոգեն ազդեցության: Հազվագյուտ բուսատեսակների տարածման վայրերը պահպանելու համար առաջարկվել է գործող իրավական դաշտի հիման վրա սահմանել պահպանման համապատասխան ռեժիմ: ՅԿ բնապահպանության նախարար Ա. Մինասյանն առաջարկել է ուսումնասիրությունների արդյունքները քննարկել Կենսառեսուրսների կառավարման գործակալության հետ և ներկայացնել համապատասխան առաջարկներ: «Գիտակցիր իրավունք» ՅԿ-ի գործադիր տնօրեն Լ. Թասալյանն առաջարկել է քննարկել բնապահպանական ոստիկանության ձևավորման մեխանիզմները: Հասարակական խորհրդի



Նախագահը տեղեկացրել է, որ ՅԿ կառավարության նախաձեռնած տեսչական բարեփոխումների գործընթացը իրականացման փուլում է և առաջարկել է ներկայացված մոտեցումները դիտարկել նախատեսվող բարեփոխումների շրջանակում: Ա. Մինասյանը մասնավորապես նշել է, որ կուժեղացվի տեսչության կանխարգելիչ գործառույթը և տեսուչները 24-ժամյա ռեժիմով աշխատելու իրավունք կունենան: Կձևավորվի նաև վարձատրության և խրախուսման համակարգ, ինչը կնպաստի կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: Ա. Մինասյանն առաջարկել է զեկույցում ներկայացված մոտեցումները դիտարկել տեսչական բարեփոխումների շրջանակներում անցկացվող քննարկումների ժամանակ:

Մանրակրկիտ վերլուծվել են Ճշգրտվել է Էկոլոգիական ենթախմբում ընդգրկված թվով 6 նպատակների և ցուցանիշների համապատասխանությունը



«ՅԿ բնապահպանության նախարարի տեղակալ հաչիկ Չակոբյանի նախագահությամբ տեղի է ունեցել Կայուն զարգացման նպատակների համակարգման միջգերատեսչական հանձնաժողովի «Էկոլոգիա-

կան» աշխատանքային խմբի երկրորդ նիստը: Ողջունելով ներկաներին՝ նախարարի տեղակալը կարևորել է Հայաստանում Կայուն զարգացման իրականացման գործընթացը, այնուհետև անդրադարձել հանձնարարականի կատարման ընթացքին: Նիստին մասնակից աշխատանքային խմբի անդամները քննարկել են մինչև 2030 թ. Հայաստանում Կայուն զարգացման իրականացման գործընթացը, մանրակրկիտ վերլուծել և Ճշգրտել էկոլոգիական ենթախմբում ընդգրկված թվով 6 նպատակների /թիրախների/ և ցուցանիշների համապատասխանությունը՝ որոշելով Հայաստանի Հանրապետության համար դրանց կիրառելի տարբերակները: Նիստի ավարտին Խ. Չակոբյանն ամփոփել է աշխատանքային քննարկումը և առաջարկել աշխատանքային խմբի անդամների առաջարկությունների հիման վրա պատրաստել նպատակների՝ Հայաստանի համար նախընտրելի և կիրառելի տարբերակը:

Կառավարության ծրագրում ընդգրկված է 36 բնապահպանա- կան միջոցառում



• ԵՄ դասվիրակությունը դեսպան Պյոտր Սվիտալսկուի ղեկավարությամբ տրամադրված է արդյունաբերից և ակնկալում է ավելին

Է՛ն բնապահպանության նախարար Արծվիկ Սինասյանը հանդիպել է Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկուի ղեկավարած պատվիրակության հետ: Ողջունելով հյուրերին՝ նա շնորհակալություն է հայտնել Եվրոպական Միությանը՝ ոլորտին ցուցաբերած աջակցության ու համատեղ աշխատանքի արդյունքում ունեցած ձեռքբերումների համար, կարևորել հետագա համագործակցության և իրականացվելիք ծրագրերի արդյունավետությունը նոր որակի բարձրացնելու անհրաժեշտությունը: Նախարարը ներկայացրել է ոլորտում գերատեսչության կողմից իրականացվող գործողությունների ռազմավարությունը և բարեփոխումների ընթացքը՝ տեղեկացնելով, որ վերոհիշյալ միջոցառումների շրջանակում կատարվող հիմնական քայլերից մեկն ուղղված է համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: Այդ նպատակով ներկայում ձևավորվում է բնապահպանական թույլտվությունների միասնական էլեկտրոնային համակարգ՝ էականորեն թեթևացնելով տնտեսվարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց թույլտվությունների տրամադրման գործընթացը: Մեծածավալ աշխատանքներ են տարվում բնապահպանական ուղղվածություն ունեցող դրամաշնորհային ծրագրերի նպատակայնության և արդյունավետության բարձրացման համար: Տեղեկացվել է, որ նախարարության գերակա ուղղություններից է միջազգային դոնորների հետ համագործակցությունը, և այդ նպատակով ձևավորվել է դոնորների խորհուրդ, որը թույլ կտա ոչ միայն միջազգային գործընկերներին ծանոթանալ միմյանց ծրագրերին, այլև տեղեկանալ այդ ուղղությամբ պետության իրականացրած աշխատանքներին: Դեսպան Պ. Սվիտալսկին շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Ա. Սինասյանին է փոխանցել իր ջերմ շնորհավորանքները նախա-

րարի պատասխանատու պաշտոնում կրկին նշանակվելու կապակցությամբ և կիսել նրա հնչեցրած կարծիքը՝ համագործակցությունը նոր որակական մակարդակի բարձրացնելու անհրաժեշտության վերաբերյալ: Դեսպանը կարևորել է «Կանչ Հայաստանի» գաղափարը, որը, չնայած տեխնիկական առաջընթացի ներկա ծավալներին, Հայաստանի ապագան է: Ա. Սինասյանը տեղեկացրել է, որ ՀՀ կառավարության ծրագրում ընդգրկված է 36 բնապահպանական միջոցառում, որոնց համատեքստում կանաչ տնտեսության գաղափարն է: Նախարարը շնորհակալություն է հայտնել դեսպան Պ. Սվիտալսկուին՝ ԵՄ Արտոնությունների ընդհանրացված համակարգը (GSP+) Հայաստանում արդյունավետ դարձնելու ուղղությամբ ցուցաբերած ջանքերի համար՝ հիշեցնելով, որ Եվրոպական երկրների հետ Հայաստանի արտոնյալ առևտրային ռեժիմ սահմանող վերոհիշյալ համակարգի գործածությունն ապահովող միջազգային համաձայնագրերից 8-ը բնապահպանական ուղղվածության են և հայկական կողմը գործադրում է բոլոր միջոցները՝ այդ համաձայնագրերով առաջընթաց ապահովելու համար: Նախարարը դեսպանին խնդրել է աջակցել Եվրամիության երկրների կողմից իրականացվող բնապահպանական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հարցում, որպեսզի Հայաստանը կարողանա դրանցում ներգրավվելու հնարավորություններին ծանոթանալ և համապատասխան առաջարկություններ մշակել: Կողմերը քննարկել են նաև «Մաքուր Հայաստան» ծրագրի իրականացման ընթացքին, «Պարտք՝ բնության պահպանության դիմաց» նախաձեռնությանը վերաբերող հարցեր: Հանդիպման ավարտին կողմերը հայտնել են իրենց պատրաստակամությունը լիարժեք և անհրաժեշտ ժամկետներում շարունակել համագործակցությունը բնապահպանական քաղաքականության իրականացման բոլոր ուղղություններով:

Նախարարության կիրառած պատժամիջոցներից 22 պետական բյուջե է մուտքագրվել 0,5 մլն. դրամ

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից 26.06-30.06.2017 թթ. ժամանակահատվածում իրականացված շրջայցերի, տեսչության վարույթին հանձնված գործերի քննության և հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերված խախտումների արդյունքում կայացվել է 831,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի 14 որոշում և հաշվարկվել 632,65 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Բուսական աշխարհի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 200 հազ. դրամի 4 որոշում և հաշվարկվել է 261,75 հազ. դրամի շրջակա միջավայրին պատճառված վնաս, որից՝

Լոռու տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված ապօրինի հատված 5 ծառի (սոճենի) համար կայացվել է 50,0 հազ. դրամի 1 որոշում և հաշվարկվել է 63,75 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Սյունիքի տարածքային բաժնի «Հայանտառ» ՊՈԱԿ «Կապանի անտառտնտեսություն» մ/ճ-ի կողմից կազմված 2 արձանագրության հիման վրա (ապօրինի հատված 14 բոխի) 2 ֆիզիկական անձանց ենթարկել է 100,0 հազ. դրամ ընդհանուր գումարի վարչական տուգանքի և հաշվարկել է 53,0 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս: Սյունիքի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված 1 դեպքի (հատվել է 2 բոխի) համար կայացվել է 50,0 հազ. դրամի 1 որոշում և հաշվարկվել է 145,0 հազ. դրամի բուսական աշխարհին հասցված վնաս:

Ապօրինի որսի իրականացման համար

Կազմվել է 170,0 հազ. դրամի վարչական տուգանքի 3 որոշում և հաշվարկվել է 19,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս, առգրավվել է 84 հատ (31.9կգ) «սիգ» տեսակի ձուկ, 4 հատ ձկնորսական ցանց:

Որից՝ Գեղարքունիքի տարածքային բաժնի «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի հետ համատեղ ստուգայցերի արդյունքում հայտնաբերել է 53 հատ (13.7կգ) «սիգ» տեսակի ձուկ, ինչն օրենքով սահմանված կարգով հանձնել է «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ: Գեղարքունիքի տարածքային բաժնի «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ից ստացված ապօրինի արածեցման փաստի հիման վրա կազմվել է արձանագրություն: Նշանակվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում և հաշվարկվել է 2,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Երևանի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում Երևանյան լճից առգրավվել է 3 ձկնորսական ցանց և 2 արկղ «կարաս» տեսակի թարմ ձուկ, ինչը բաց է թողնվել լիճ:

Արարատի տարածքային բաժնի վարույթին հանձնված 1 գործով՝ (հայտնաբերվել է արջի քոթոթ) կայացվել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում: Կոտայքի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հայտնաբերվել է առգրավվել է 20 հատ

(14կգ) «սիգ» տեսակի ձուկ: Չուկն օրենքով սահմանված կարգով հանձնվել է Արմավյան քաղաքի «Նարեկ» ծերանոցին: Շիրակի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հայտնաբերվել է ապօրինի ձկնորսության մեկ դեպք: Կայացվել է 70,0 հազ. դրամի վարչական տուգանքի որոշում և հաշվարկվել է 17,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Առգրավվել է 1 դնովի ձկնորսական ցանց՝ 30,0 գծմ երկարությամբ և 5,5 կգ (17 հատ) «կարաս» տեսակի ձուկ, հայտնաբերվել է նաև տիրագուրկ 11 հատ (4,2 կգ) «սիգ» տեսակի ձուկ, ինչն օրենքով սահմանված կարգով հանձնվել է «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ:

Փայտանյութի ապօրինի տեղափոխում:

Կազմվել է վարչական տուգանքի 4 որոշում՝ 301,0 հազ. դրամի և հաշվարկվել է 81,9 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝

Տավուշի տարածքային բաժնի ՀՀ ոստիկանության Իջևանի բաժնից ստացված արձանագրության հիման վրա մեկ իրավախախտի նկատմամբ կայացրել է 100,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում: Տավուշի տարածքային բաժնի աշխատակիցների կողմից հայտնաբերված ընկույզի ապօրինի հավաքման 3 դեպքի համար կայացվել է 1,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում և հաշվարկվել է 9,9 հազ. դրամի բնությանը պատճառված վնաս: Արարատի տարածքային բաժնի աշխատակիցների շրջայցերի արդյունքում հայտնաբերված վառելավայրի ապօրինի տեղափոխման 2 դեպքի համար կայացվել է 200,0 հազ. դրամ ընդհանուր գումարի 2 որոշում և հաշվարկվել է 72,0 հազ. դրամ ընդհանուր գումարի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Հողերի պահպանության ոլորտ

Կազմվել է վարչական տուգանքի 2 որոշում՝ 80,0 հազ. դրամի, որից՝

Գեղարքունիքի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հողի բերրի շերտի տեղափոխման համար ֆիզիկական անձի նկատմամբ կայացրել է 50,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում: Արագածոտնի տարածքային բաժնի աշխատակիցների ստուգայցերի արդյունքում հողի բերրի շերտի տեղափոխման համար ֆիզիկական անձի նկատմամբ կայացվել է 30,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանն դրական եզրակացության բացակայության համար՝

Կազմվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 80,0 հազ. դրամի և հաշվարկվել է 270,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս, որն է՝

Գեղարքունիքի տարածքային բաժնի «Սևան ԱՊ» ՊՈԱԿ-ի հետ համատեղ կազմվել է առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացության գործունեություն իրականացնելու վերաբերյալ արձանագրություն, իրականացվել է վարչական վարույթ: Իրավախախտի նկատմամբ կիրառվել է 80,0 հազ. դրամի վարչական տուգանքի 1 որոշում և հաշվարկվել է 270,0 հազ. դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս: Վարչարարության և փորձաքննության բաժնի հաշվետու ժամանակաշրջանում դատական ակտերի հարկադիր կատարման է ներկայացրել 5 վարչական տուգանքի որոշում՝ 300,0 հազ. դրամի չափով և վնասի փոխհատուցման 4 որոշում՝ 213.45 հազ. դրամի չափով:

Ընդհանուր առմամբ ԲՊՏ կիրառված պատժամիջոցներից նշված ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 0.5 մլն. դրամ գումար:

Սեւանա լճի 11 հանրային լողափ հուլիսի 1-ից կհյուրընկալի հանգստացողներին

2017 թ. հունիսի 29-ին տեղի է ունեցել ՀՀ բնապահպանության նախարարի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Աշոտ Ավալյանի մամուլի ասուլիսը՝ հանրային լողափերի բացման վերաբերյալ: «Հանրային լողափերի թիվը 11 է, որոնցից 8-ը ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հատկացված տարածքներ են, իսկ 3-ն՝ առանձնացրել է «Սևան» ազգային պարկը», - ասել է հանրային լողափերում իրականացվող աշխատանքների պատասխանատու Ա. Ավալյանը: Նա հավելել է, որ հանրային լողափերից 3-ը հանրային ծառայություններ մատուցող են, իսկ 8-ը նախատեսված է զուտ կարճատև հանգստի համար: Հաջորդ տարի Սեւանա լճի տարածքում գործող ծառայությունների մատուցման լողափերի թիվը մեկով կավելանա: «Ծառայությունների մատուցման լողափերը ներառում են անվճար բուժսպասարկում, մանկական և սպորտային խաղահրապարակներ, հանգստի գոտիներ, տապալանների տրամադրում և այլ: Այս լողափերը, բացի սննդի հետ կապված վճարներից, այս տարի ևս անվճար կլինեն: Հանրային լողափերի նախապատրաստական աշխատանքներն արդեն իսկ ամբողջությամբ ավարտված է: Հուլիսի 1-ին տեղի է ունեցել հանրային լողափերի պաշտոնական բացումը:



Հունիսի 17-ը աղբահանության ոլորտում աշխատողների միջազգային օրն էր



Հունիսի 17-ը աղբահանության ոլորտում աշխատողների միջազգային օրն էր, ինչի առթիվ «Sanitek»-ը սոցիալական նախաձեռնությունը ևս մեկ անգամ հիշեցրեց, որ մաքուր միջավայր ունենալու համար պատասխանատու ենք բոլորս:



Եկե՛ք միասին հոգատար լինենք շրջակա միջավայրի, մեր շուրջը ապրող մարդկանց հանդեպ:



Նախագիծը՝ Արծրուն Պետանյանի
խմբագիր՝ Սանվել Սկրչյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517